ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«07» ապրիլի 2017թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետի տեղակալ _____ Հ. Այունց

ԳԲԽ-41/17 բողոքը քննող

հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Իդեալ Թրավել» ՍՊԸ-ի 30.03.2017թ. ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. **«Իդեալ Թրավել» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը**

«Իդեալ Թրավել» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 30.03.2017թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ 2017թ. մարտի 22-ին «Իդեալ Թրավել» ՍՊԸ-ն (www.armeps.am) էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտը ներկայացրել է և փորձել է մասնակցել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից վրանաձծկերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/6-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-4/6»

ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգի (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընկերությունը նշել է, որ 20.03.2017թ. ժամը 10:00-ին տեղի է ունեցել Ընթացակարգի հայտերի բացման նիստը, և մյուս այլ կազմակերպությունների նման «Իդեալ Թրավել» ՍՊԸ-ի հայտը ընդունվել է (www.armeps.am) էլեկտրոնային կայքի կողմից և համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

Ավելի ուշ Ընկերությունը ծանուցում է ստացվել Պատվիրատուից, որ Ընկերության հայտը չի բացվել, փաստաթղթեր կցված չեն, առկա են տարատեսակ խնդիրներ և այլն՝ ինչի պատճառով չի կարող գնահատվել Ընկերության հայտը:

«Իդեալ Թրավել» ՍՊԸ-ն նույն օրը դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ խնդրելով ուսումնասիրել Ընկերության կողմից ներկայացված հայտը և հայտնել հայտի հետ կապված խնդիրների վերաբերյալ:

Կենտրոնը 27.03.2017թ. թիվ 02/03.1/1187-17 գրությամբ հայտնել է, որ «Իդեալ Թրավել» ՍՊԸ-ի կողմից նշված խնդրի լուծման համար Կենտրոնը դիմել է համակարգի տեխնիկական սպասարկումը իրականացնող կազմակերպությանը: Կազմակերպությունն, ուսումնասիրելով խնդիրը, տեղեկացրել է, որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/6-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-4/6» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգին «Իդեալ Թրավել» ՍՊԸ-ի հայտի չբացվելը պայմանավորված է եղել համակարգի սխալով (համակարգը սխալ բանալի է գեներացրել):

Ընկերությունը նշել է նաև, որ Ընթացակարգի շրջանակներում Ընկերության մեղավորությունը բացակայում է, քանի որ էլեկտրոնային ձևով գնումների կատարման կարգի 4-րդ կետի համաձայն՝ համակարգը ունի տվյալները կոդավորելու և հայտերի բացման պահը այդ տվյալների ապակոդավորման անհնարինությունն ապահովելու հնարավորություն: Համակարգը կգեներացնի մրցույթի պատասխանն՝ իբրև մեկ սեղմված և գաղտնագրված ֆայլ ծրագրում հայտնի՝ իբրև Հայտի Փաթեթ:

Ընկերության կողմից կատարման համար պարտադիր բոլոր գործողությունները ճիշտ կատարելը է, ինչը հաստատվել է Կենտրոնի կողմից ուղարկված 27.03.2017թ. 02/03.1/1187-17 գրությամբ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի՝

• 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

• 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված նպատակի իրագործման համար, գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝

1) գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

«Իդեալ Թրավել» ՍՊԸ-ի կարծիքով՝ Օրենքի 3-րդ հոդվածի խախտում է արձանագրվել Ընթացակարգի շրջանակներում, ինչի պատճառով Ընկերությունը փաստացի չի դարձել Ընթացակարգի մասնակից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է.

1. Դադարեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/6-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-4/6» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ հայտարարելու մասին գնահատող հանձնաժողովի 2017թ. մարտի 13-ի թիվ 1 որոշումը:

2. Կիրառել ժամանակավոր միջոց՝ կասեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/6-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-4/6» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի ցանկացած գործողության իրականացումը, որոշումների կայացումը:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները</u>

Կենտրոնը 31.03.2017թ. թիվ 02/04.1/1254-17 գրությամբ ՀՀ պաշտպանության նախարարությանը խնդրել է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/6-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-4/6» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները և տալ կարծիք, սակայն Պատվիրատուի կողմից որևէ պատասխան չի ներկայացվել:

3. <u>ԳԲԽ-41/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ԳԲԽ-41/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից վերնաածածկերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/6-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-4/6» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ:

2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից վերնաածածկերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/6-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-4/6» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի համաձայն՝ շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am կայքի) համակարգի միջոցով:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.03.2017թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Իդեալ Թրավել» ՍՊԸ-ի հայտը www.armeps.am էլեկտրոնային կայքի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի:

4. «Իդեալ Թրավել» ՍՊԸ-ն 22.03.2017թ. դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին և հայտնել է, որ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել, սակայն հայտերը բացելուց հետո Ընկերությունը տեղեկացել է, որ վերջինիս

հայտը չի բացվել: Հաշվի առնելով վերոգրյալը՝ Ընկերությունը Կենտրոնին խնդրել է այդ հարցին տալ պարզաբանում և լուծում:

5. Կենտրոնը 27.03.2017թ. թիվ 02/03.1/1187-17 գրությամբ հայտնել է, որ «Իդեալ Թրավել» ՍՊԸ-ի կողմից նշված խնդրի լուծման համար Կենտրոնը դիմել է համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող «ԱյՅուՆեթվորքս» ՍՊԸ-ին: Վերջինս ուսումնասիրելով խնդիրը՝ տեղեկացրել է, որ Ընթացակարգին «Իդեալ Թրավել» ՍՊԸ-ի հայտի չբացվելը պայմանավորված է եղել համակարգի սխալով (համակարգը սխալ բանալի է գեներացրել):

6. ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝ ի դեմս ԳԲԽ-41/17 բողոքը քննող հանձնաժողովի, 04.04.2017թ. կայացրած որոշմամբ բավարարել է «Իդեալ Թրավել» ՍՊԸ-ի միջանկյալ ընթացակարգ կիրառելու վերաբերյալ պահանջը:

4. <u>ԳԲԽ-41/17 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը</u>

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Իդեալ Թրավել» ՍՊԸ-ի 30.03.2017թ. ներկայացրած բողոքը, Կենտրոնի 27.03.2017թ. թիվ 02/03.1/1187-17 գրությունը, «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/6-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-4/6» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին վերաբերող փաստաթղթերի պատճենները, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի՝

- 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

• 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված նպատակի իրագործման համար, գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝

1) գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին որևէ անձի մասնակցությունը կարող է սահմանափակվել միայն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, եթե դա անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության և պաշտպանության ապահովման համար:

Այսպիսով, ՀՀ պաշտպանության նախարարության կողմից վերնաածածկերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/6-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-4/6» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի համաձայն՝ շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am կայքի) համակարգի միջոցով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.03.2017թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Իդեալ Թրավել» ՍՊԸ-ի հայտը www.armeps.am էլեկտրոնային կայքի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի:

«Իդեալ Թրավել» ՍՊԸ-ն 22.03.2017թ. դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին և հայտնել է, որ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել, սակայն հայտերը բացելուց հետո Ընկերությունը տեղեկացել է, որ վերջինիս

հայտը չի բացվել: Հաշվի առնելով վերոգրյալը՝ Ընկերությունը Կենտրոնին խնդրել է այդ հարցին տալ պարզաբանում և լուծում:

Կենտրոնը, ի պատասխան «Իդեալ Թրավել» ՍՊԸ-ի վերը նշված գրության, 27.03.2017թ. թիվ 02/03.1/1187-17 գրությամբ հայտնել է, որ «Իդեալ Թրավել» ՍՊԸ-ի կողմից նշված խնդրի լուծման համար Կենտրոնը դիմել է համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող «ԱյՅուՆեթվորքս» ՍՊԸ-ին: Վերջինս ուսումնասիրելով խնդիրը՝ տեղեկացրել է, որ Ընթացակարգին ***«Իդեալ Թրավել» ՍՊԸ-ի հայտի չբացվելը պայմանավորված է եղել համակարգի սխալով (համակարգը սխալ բանալի է գեներացրել):***

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ էլեկտրոնային գնումների համակարգի տեխնիկական սպասարկում իրականացնող կազմակերպություն հանդիսացող «ԱյՅուՆեթվորքս» ՍՊԸ-ի պատասխանի համաձայն՝ ***«Իդեալ Թրավել» ՍՊԸ-ի հայտի չբացվելը պայմանավորված է եղել համակարգի սխալով (համակարգը սխալ բանալի է գեներացրել),*** ուստի գտնում ենք, որ նման պայմաններում «Իդեալ Թրավել» ՍՊԸ-ի գնման գործընթացին մասնակցելու իրավունքը (տվյալ դեպքում հայտ ներկայացնելու իրավունքը) սահմանափակված է եղել և Ընկերությունը օբյեկտիվորեն զրկվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/6-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-4/6» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու իրավունքից, ինչը հանգեցրել է Օրենքի 3-րդ և 6-րդ հոդվածների խախտմանը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ Ընկերության 30.03.2017թ. բողոքն հիմնավոր է, ուստի առաջարկում ենք «Իդեալ Թրավել» ՍՊԸ-ի 30.03.2017թ. ներկայացրած բողոքը բավարարել. դադարեցնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/6-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-4/6» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի Ընթացակարգ հայտարերելու մասին 13.03.2017թ. թիվ 1 որոշումը:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Գնումների բողոքարկման և իրավական
խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի պետ՝ Ռ. Մկրտչյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի գլխավոր
մասնագետ՝ ԳԲԽ-41/17 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝ Լ. Հովակիմյան